

Թէ հայերը և թէ թուրքերը պարագում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 1207 զ. 1344 զ. սաթէն վարելահող, և 1399 զ. 1330 զ. ս. արօտատեղի: Գոմուած է այստեղի իւղը:

ԳԵՕԼԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Երանոս.—(62° 51'—40° 12' 25").—Փռուած է մի փոքրիկ զառիվայրի վրայ, համանուն առուակի եզրին, իւր առաջ ունենալով գեղածիծաղ Սևանայ լիճը: Բնուած է 42 դես. 576 զ. ս. տարածութիւն, որից միայն 34 զ. 1344 զ. ս. է շինութիւններով ծածկուած: Հնումը այս գիւղը կոչուել է Չազ, այդ ժամանակներից Թաքել են մի երկու խաչքար, որոնց վրայ կան հետեւեալ տապանագրերը.

Աստուածածին եկեղեցու բեմի վրայ գործադրուած խաչքարի.—

Թվին ՈԿԴ (=1215), ի հայրապետութեան Տեառն Սարգսի Սիւնեաց եպիսկոպոսի ես Յակոբս կանգնեցի զխաչս ծնողի իմոյ Պաշիկին. յիշեցէք:

Գիւղի վերեւի հանգստարանի մի խաչքարի վրայ.

Սուրբ խաչս բարեխաւս Ամիրադին թվ. 226 (=1536).

Նոյն տեղի մի ուրիշ խաչքարի վրայ.

Ես Սարգիս կանգնեցի զխաչս հաւրն իմ Բէգլարին, յիշեցէք ի Քրիստոս. թվ. ՌԼ. (=1581).

Ս. Աստուածածին եկեղեցու դաւթի խաչարձանի վրայ.

Ասլան աղէս կանգնեցի խաչս. թվ. ՌԻԴ (=1575):

Գիւղի արեւմտեան կողմը, լեռան զազաթին գանուած է Սալ կոտի անապատը, որ այժմ ս. Թովմանէս անունով մեծ ուխտատեղի է համարուում: Սրանից փոքր ինչ բարձր կայ ս. Սոփիա անունով մի ուրիշ մատուռ էլ: Ժողովուրդը հաւատում է թէ այս երկու մատուռներում քոյր ու եղբայր նահատակներ են անփոփուած:

Բնակիչները Ալաշկերտի գիւղերից են, 239 տուն, 1185 ար. 1032 իգ. ի միասին՝ 2217 հոգի:

Պարագում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և ձկնորսութեամբ: Ունին 1452 զ. 848 զ. ս. վարելահող, և 1671 զ. 864 զ. ս. արօտատեղի: Գիւղի լճափում ձկնորսութեամբ պաշարակու իրաւունքը գիւղացիներին է պատկանում:

Գիւղի հանդէպ, հազիւ 2 կիլոմետր հեռու, լճափին, մի

փոքրիկ բլրակի վրայ կայ մի եկեղեցու և տների աւերակներ։ Շատ հաւանական է, որ սա Սիմէօն կաթողիկոսի յիշած Փոքր Ձաղը եղած լինի։ Այժմ սրա մօտ, Նոր-Բայազէտից դէպի Բասար-գեշար տանող ճանապարհի վրայ շինուած են երկու կարաւանատուն։

Աղած-խան. ($62^{\circ}51'25''$ — $40^{\circ}11'25''$).—Ընկած է ծառազարդ ձորակի մէջ, մի առուակի ափին և բռնում է 11 դես. 1200 ք. սաժէն տարածութիւն։ Ունի մի հին եկեղեցի, ս. Աստուածածնի անունով, որի հարաւային պատին կից մի խաչքարի վրայ արձանագրուած է.

Ես Միրզայ Մկրտիչ կանգնեցի զխաչս հաւրն մեր Աթանասին. թվին 277 (=1544)։

Եկեղեցու շուրջը կան մի քանի տապանաքարեր, որոնցից մինի վրայ գրուած է.

Թվ. Ռիե (=1576). Այս է հանգիստ Զաւհրապին, որ մարտիրոսացաւ ի սէրն Գրիստոսի։

Ս. Սարգիս անունով մի աւերակ եկեղեցի էլ կայ գիւղի արեւմտահիւսիսային կողմում։

Սակայն այս գիւղը նշանաւոր է այն սեպածե արձանագրութեամբ, որ գտնուած էր լճափին և որ 1866 թուին փոխադրուած է Կովկասեան թանգարանը։

Բնակիչները Ալաշկերտի գիւղերից են, 147 տուն, 612 ար. 597 իգ. ի միասին՝ 1209 հոգի։

Պարագմունքը նոյնն է. երկրագործութիւն, անասնապահութիւն և ձկնորսութիւն. ունին 757 դ. 1728 ք. ս. վարելահող և 647 դ. 960 ք. ս. արօտատեղի։

Վալի-աղալու կամ Ձորագեղ. ($62^{\circ}49'55''$ — $40^{\circ}10'29''$).—Ձետեղուած է մի ձորակի լանջին, որի մօտ բարձրանում է մի լեզուաձև բլուր։ Սրա երկու կողմից հոսում են առուակներ և միանում գիւղի ներքին մասում։ Տեղի անյարմարութեան պատճառով տները կուտակուած են միմեանց վրայ և ամբողջ գիւղը բռնում է միայն 3 դ. 864 ք. ս. դրեթէ ամբողջովին ծածկուած շինութիւններով։ Բլրի հարթ զազաթին դեռ ևս ֆիւում են Շողազայ վանքի մի քանի պատերը և նրա ու Սեանայ վանքի հիմնադրի, Սիւնեաց Գարուն Վասակ իշխանի կին՝ Մարիամ տիկնոջ հանգստեան մատուռը ¹⁾։ Շողազայ վանքից դէպի արեւմուտք, հազիւ 50 մետր հեռու կայ մի ընդարձակ գերեզմանատուն, ուր

1) Տես նշանաւոր վանքերի բաժնում։

միմեանց կից կանգնեցրած երկու խաչքարերի պատուանդանների վրայ շարունակաբար գրուած է.

Ի ԹՎ. ՈԶԳ. (=1234) յիշխանութեան Սեւադի և ի հայրապետութեան Տր Յովանիսի ես սուտ անուն երեց Յովասափս որդի երջանիկ քահանային Խորդինոյ կանգնեցի զխաչս ծնողաց իմոց. յաղաւթս յիշեցէք:

Այս խաչքարի մօտ կայ մի ուրիշ խաչքար՝ հետեւեալ տապանագրով.

ԹՎ. ԶԺ (=1261). Ես Ոսկեան կանգնեցի զխաչս ինձ և ամուսնոյ իմոյ և որդւոյ Շարոյին. յաղաւթս յիշեցէք:

Մի ուրիշ խաչքարի վրայ.

Սուրբ խաչս բարեխաւս Բարաթ աղին. ԹՎին ԶԶԹ (=1540):

Այս գերեզմանատան մէջ նկատելի է և մի փոքրիկ, խաչաձև մատրան հիմնապատեր:

Գիւղից բարձր, հարաւային կողմում, հարթութեան վրայ կայ մի գիւղատեղի և մի աւեր եկեղեցի, որին ժողովուրդը Պօղոս Պետրոս կամ ս. Խաչ է կոչում: Այստեղից փոքր ինչ արևմուտք, ձորակի մէջ գտնուում են մի քանի բնական փոքրիկ քարայրեր և մի անցք, որ յառաջացել է երկու մեծ քարեր միմեանց կրթնելուց: Հին դարերի այս կտէիսը այժմ էլ պաշտում է քրիստոնէական շաքարի տակ. կանգնեցրած են երկու, առանց որևէ գրութեան հասարակ խաչքարեր և ս. Յակոբի ճգնարան անուանել: Դեռ այժմ էլ այստեղ ուխտ են գալիս առաւելապէս ամուլ կանայք՝ որդի հայցելու: Այս կտէիսի մօտ կայ սառն ջրի մի աղբիւր, որ նոյնպէս սուրբ է համարւում:

Գիւղի արևմտեան կողմում, ուր սկսւում է ձորակը, կան 10—15 արհեստական այրեր, որ երբեմն ծառայել են իբր բնակարան: Սրանցից փոքր ինչ վերև, բարձրավանդակի վրայ կայ մի հինաւուրց ամրոցի աւերակ:

Իսկ հարաւարևմտեան կողմում, Մակ-քար գիւղի մօտ գտնւում է Մասրոց անապատը: *)

Գիւղում կայ մի հասարակ եկեղեցի, որ թէպէտ անցեալ տարի գրեթէ հիմնովին վերանորոգեցին, սակայն դռան վերև ամրացրին հին կամարակալ քարը, որի վրայ արձանագրուած է.

Կամաւն Աստուծոյ նորոգեցաւ սուրբ Աստուածածին եկեղեցիս ի ժամանակս Ռուսաց կայսրութեան Աղէքսանդր

* Տես Շնշանաւոր վանքեր՝ բաժնում:

Նիկողայեիչին ի հայրապետութեան Տեառն Մատթէոսի և ի վերապետութեան աղայ Բարսեղի Արծրունեան, որոյ հրամանաւ և արդեամբ բոլոր ժողովրդեանն նորոգել ետու ևս Գրիգոր քահանայ Յօհան Վարդապետեան 1858 թուին ՌՁԷ.

Բնակիչներն Ալաշկերտի Զլկանի, Համոկան, Քոչի-գեղ, Դուդաղ, Բաւն և Տոմայ գիւղերից են, ընդամենը 190 տուն. 887 ար. 886 իգ. ի միասին 1773 հոգի:

Պարապուժ են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունին 2022 դ. 672 ք. ս. վարելահող և 805 դ. 2000 ք. ս. արօտատեղի:

Դիւղի հարաւային կողմում, մօտ 5 կիլոմետր հեռու դառնւում է մի աւերակ գիւղատեղի՝ որ այժմ կոչւում է Սըչանլու: Այստեղ կայ մի աւեր եկեղեցի և մի քանի խաչքար՝ առանց տապանազրի:

Ծակ-քար կամ Գալիկ տաշ. ($62^{\circ} 52' 48''$ — $40^{\circ} 10' 10''$).—Ձեռնդուած է համանուն գետակի ափին, որ ծակելով մի մեծ քարածայռ, իւր համար ճանապարհ է բացել, իսկ ժայռը այժմ ծառայում է իբր կամուրջ: Բռնում է 10 դ. 1248 ք. ս. տարածութիւն, և զարդարուած է ուռնիններով. զեղեցիկ է մանաւանդ գետակի վերին մասը, ուր նա ոլորուելով մի փոքրիկ հարթութեան վրայ, անցնում է Ծակ-քարի միջով: Դիւղում կայ մի նոր, հասարակ, իսկ փոքր ինչ հետսւ՝ ս. Պօղոս անունով մի հին, կիսաւեր եկեղեցի:

Դիւղում թէպէտ հնութիւններ չեն մնացել, սակայն յայտնի է, որ բաւական հին է եղել և կոչուել է Կոսկածն կամ Կոսկիծ և Աշոտ Ա-ը, նախ բան թագաւորելը՝ այս գետի մէջ ձուկ որսալու արտօնութիւնը շնորհել է Սեանայ վանքի միաբանութեան, որովհետև լճից այս գետակն են բարձրանում կողակ, աղինճան, կոսկուոց և չալա կոչուած ձկները:

Բնակիչները Ալաշկերտի զանազան գիւղերից են, ընդամենը 88 տուն, 477 ար. 444 իգ. ի միասին 921 հոգի:

Պարապուժ են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և ձկնորսութեամբ: Ունին 965 դ. 88 ք. ս. վարելահող և 303 դ. 648 ք. ս. արօտատեղի:

Թազա գիւղ կամ Թազարնտ.—($63^{\circ} 52' 20''$ — $40^{\circ} 9' 2''$). Տեղաւորուած է Ղարա-Թափա լեռան լանջին, և բռնում է 13 դ. 1056 ք. ս. տարածութիւն: Թէպէտ անունը Նորագիւղ է, վերջին ժամանակներս վերաբնակուած լինելու պատճառով, սակայն ըս-

ւական հին է եղել և կոչուել է Միրարաթ: Հնութիւններից նշանաւոր է Ս. Գրիգոր Լուսաւորչի վանքը, գիւղի արեւմտեան կողմում. սա անտաշ քարով շինուած մի հասարակ զմբեթաւոր շէնք է, որի արեւելեան պատի հարաւային կողմում կայ հետեւեալ արձանագրութիւնը.

Ի թվիս ԶԼԵ (=1286) գրեցաւ յիշատակ. ես Վարդան շահ միաբանեցայ անարժան մեղուցեալս և նորոգեցի զեկեղեցիս իմ հալալ արդեանց...

Վանքի շուրջը կան բաւականաչափ խաչքարեր և տապանաքարեր, որոնց վրայի տապանապրերից ուշագրաւ են հետեւեալ երկուսը.

1) Ի թվիս ԶԽԲ (=1293). Այս խաչս կանգնեցի բարեխաւս...

2) Սուրբ խաչս բարեխաւս Ոսկանին թվ. ԶՂԹ (=1549)

Վանքի արեւմտեան կողմում, մօտ երկու կիլոմետր տարածութեան վրայ նկատուած են ջրի խողովակներ, որոնցով երբեմն ջուր է եկել վանքը:

Գիւղում կան մի կանգուն և մի աւերակ եկեղեցի ևս:

Բնակիչները Աւաշկերտի դանադան գիւղերից են, ընդամենը 147 տուն. 615 ար. 581 իգ. իմիասին՝ 1196 հոգի:

Պարապմունքը նոյնն է՝ երկրագործութիւն, անասնապահութիւն և ձկնորսութիւն: Ունին 1239 դ. 566 ք. ս. վարելահող, 678 դ. 647 ք. ս. արօտատեղի:

Գծուլ. — (62°53'50" — 40°9'38") — Տեղաւորուած է գրեթէ լճի ափին, բռնում է 23 դ. 2320 ք. ս. տարածութիւն: Հնումը կոչուել է Լճատեղ կամ Եղեղնաղիւղ: Թէ հին և թէ այժմեան թիւրքական նոյնանիշ անունը բնորոշում է տեղի գրութիւնը: Գիւղում կայ մի հասարակ եկեղեցի և մի նոյնպիսի մատուռ, այժմ Մաղկավանք կոչուած, որի մէջ եղած խաչքարերից միմեանց կից կանգնած երկուսի վրայ արձանագրուած է.

Ի թվ. ԶԼԳ. (=1284). Ի հապ. Տր. Գրիգորի մեք եղբայր Աբրհ. քահան... անարժան Հայրաձայն և այլքս կանգնեցինք զիւշ հաւր եղբաւր մերոյ Հպին կուսակրաւն քահ. բազմաշարչար անուցողին և ծնողաց մերոց Հայրուն մին և Խաթունին և քվեր մեր. յաղ. յիշց.

Եւ էր մեր Բ. աւանի ջղջքար ի նինեաց շինաց եւ մեք պահող էաք դարապիս դանձուց արքունեաց:

Այս Ծաղկեկմանքի թէ մէջը և թէ մանաւանդ շուրջը կան բաւականաչափ խաչքարեր, որոնցից միքանիսն աւելի մօտ ժամանակի են. այսպէս մինի վրայ կայ հետեւեալ տապանագիրը.

Այս է հանգիստ Այվաքին թվին ՌՃԻԱ (=1672).

Դիւղի մէջ ևս կայ մի աւեր մատուռ, մօտը մի հին խաչքար առանց տապանագրի. գիւղի արեւելեան և արեւմտեան կողմերում ևս, բլուրների վրայ կանգնած են մի մի մեծ խաչքար, առանց գրութեան:

Դեօլը համանուն գիւղական հասարակութեան կենտրոնատեղին լինելով՝ ունի բաւական զեղեցիկ շինական դատարան:

Դիւղից դէպի արեւմտահարաւ դռնւում է Վոզոսի գեղջ առնելով մի գիւղատեղի, ուր դեռ ևս կանգուն է ս. Հռիփսիմէ առնելով մի փոքրիկ մատուռ, որի մէջ մի խաչքար կրում է հետեւեալ արձանագիրը.

Յանուն Աստուծոյ մեք Գոթ քաղաքի քահանայքս... որ փոխեցաւ ի Քրիստոս ի ճանապարհին. յիշեցէք յաղաթս թվ. 24Բ (=1313):

Նոյն խաչքարի պատուանդանի վրայ.

Սուրբ խաչս Տիրացու քահանային է, որ ի Տէր յուսալով կանգնեաց զայս խաչ: Հայր մեր Աբրահամ քահանայ, որոց հանգիստն է աստ:

Այս գիւղատեղում կայ երկաթաշրի մի աղբիւր, որ պաշտւում է իբր բորոտութեան սրբիչ:

Դեօլի բնակիչները Ալաշկերտի Թոփրաղ դալա գիւղից են, մի քանի տուն էլ Մշից: Ընդամէնը 217 տուն. 821 ար. 817 իգ. ի միասին՝ 1638 հոգի:

Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և ձկնորսութեամբ: Ունին 1873 դ. 222 ք. ս. վարելահող և 533 դ. 960 ք. ս. արօտատեղի:

Ներքին-Ատիեման.—(62°55'50"—40°8'35").—Տեղաւորուած է համանուն գետի առաւելապէս ձախ ափին և շատ զեղեցիկ տեսք ունի, որովհետեւ բացի գետից կան նաեւ բաւականաչափ յորդահոս աղբիւրներ, որոնց ջուրը կազմում է ոլորապտոյտ առուակներ, որոնք խոխոջում են բազմաթիւ ուռենիների ստուերի տակ:

Այստեղ դռնուած բազմաթիւ կռապաշտական դամբանները և քրիստոնէական յիշատակարանները վկայում են, որ այս սքանչելի լճափը ճշ միայն նախապատմական ժամանակներում բաւական խիտ բնակութիւն է ունեցել, այլ և քրիստոնէական ժա-

մանակներում Միւնեաց իշխանների բնակավայրն է եղել և կոչուել է Կոմ:

Գիւղը բռնում է 22 դ. 190 թ. ս. տարածութիւն: Նրա արեւմտեան կողմում մի բարձրաւանդակի վրայ կանգնած է Կոմայ ս. Աստուածածին վանքը, որ շինել է Գրիգոր Սուփան Բ. Միւնեաց իշխանը Ժ. դարի սկզբին¹⁾: Թերեւս այս նշանաւոր իշխանը ամփոփուած լինի այն մատրան մէջ, որ այժմ կոչոււմ է Ամենափրկիչ և գտնուում է գիւղի արեւելեան ծայրում: Այս մատրան արեւելեան կողմը կայ կամարակապ, գեղեցիկ քանդակներով շրջապատուած մի մեծ խաչքար 2,16 մետր բարձրութեան և 1,32 մետր լայնութեան, որի առաջ²⁾ դրուած է մի քառակիւնի գերեզմանաքար 2,16 մետր երկարութեան և 0,90 մետր լայնութեան 0,20 մետր հաստութեան: Խաչքարի շուրջը եղած քարերից երեւում է, որ մի ժամանակ մատուռը սրբատաշ քարով է ծածկուած եղել, սակայն այժմ անտաշ քարերով հասարակ պատեր են քաշուած: Ո՛չ խաչքարի և ո՛չ էլ տապանաքարի վրայ գիր չկայ, ականդութիւնը ևս լուրում է, միայն գիւղացիները սուրբ համարելով խնոքուն են տանում գերեզմանից և յաճախ ուխտ գալիս այստեղ:

Գրիգորի անունը կրող մի շատ գեղեցիկ խաչքար էլ կանգնած է գիւղի կենտրոնում, մի ժայռի վրայ, սակայն թուականը չի համապատասխանում Սուփան Գրիգորի մահուան տարուն: Արձանագրութիւնը հետևալն է.

Թվ. 2ԽԴ (=1295). կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն Գրիգորոյ:

Գիւղի արեւմտեան ծայրումն էլ գտնուում է սրբատաշ քարերով շինուած մի փոքրիկ, կիսաւեր եկեղեցի, որ այժմ վերանորոգել են: Եկեղեցու վերան արձանագրութիւն չկայ. գիւղացիները նրան ս. Վարդան են կոչում: Շուրջը կան բաւականաչափ խաչքարեր:

Գիւղում կայ երկու հինաւուրց մեծ գերեզմանատուն, մինը Կոթայ ս. Աստուածածին եկեղեցու գաւթում, միւսը՝ սրանից հարաւ, մի բլրի գագաթին: Մի փոքրիկ գերեզմանատուն էլ գտնուում է հարաւ արեւմուտք, բլրակի վրայ, ուր կայ նաև մի փոքրիկ կիսաւեր մատուռ, որի արեւելեան պատի ճակատին դրուած է.

Թվ. 2ԻԴ (=1275) յաշխարհակալութեան Ապաղանին

1) Տես նշանաւոր վանքերի բաժնում.

2) Ոչ ուղիղ մէջ տեղը, այնպէս որ կարծել է տալիս, թէ մօտն էլ մի ուրիշ գերեզմանաքար դրուած է եղել:

և խարնոխին, և պարոն Տարսայիճին, ևս Շմաւոն զայս թողի... եզ, մշակ, գործիք Յ... եզ և կով Մ. գլուխ:

Գերեզմանաբարերի մեծագոյն մասը խաչարձաններ են, կան և քառակիւնի և օրօրոցածե քարեր: Շատ քչերի վրայ կան տապանազրեր, և սրանցից շատերն էլ մամոռակալել և կամ եղծուել են: Կարդացուած են միայն հետեւեալները ¹⁾.

Կոթայ ս, Աստուածածնի գաւթի գերեզմանատանը.

Ես Մաթէոս վրդպ. կանգնեցի զխաչս հգյ փկի հաւըն իմոյ Զհանշիրին. յիշեցէք ի Քս. թվ. ԶհԶ (=1517).

Վանքի դրան առջև կանգնած ա. խաչքարի վրայ.

Ես Շաղուբատս սուրբ խաչս կանգնեցի դստեր իմոյ... թվ. ԶՀԷ (=1528)

բ. խաչքարի վրայ.

Ես Յակոբ քահանայ կանգնեցի խաչս ամուսնոյ իմոյ Սմպուկսին թվ. ԶՀԸ (=1529).

Ես Մանուէլս կանգնեցի խաչս բարեխաւս Եղկանին.

թվ. ԶՂ (=1541). Յակոբ նկարող.

Ես Գրիգոր կանգնեցի զխաչս. Յակոբ նկարող.

Սբ խաչս բարեխաւս Սաշում աղին թվ. Ռ. (=1551).

Սբ խաչս բարեխաւս Գրիգոր աղին. Ես Քիրամ սուրբ խաչս կազմեցի. թվ. ՌԻԴ (=1575).

Սբ խաչս բարեխաւս Մէլիք խանին թվ. ՌՃ (=1651).

Սբ խաչս բարեխաւս Բարսեղ քահանային թվ ՌՃԶ (=1657). Ես Ուանէս կազմեցի:

Հարաւային կողմի գերեզմանատանը.

Մի վայր ընկած խաչքարի երեսին.

Սբ նշանս Մարկոսին աւգնական:

Մելիքսէդէկ զտողս.

Թվ. ԿԲ (=613).

¹⁾ Առանձնապէս ես ես որոնեցի այն խաչքարերը, որոնց վրայ՝ Անտոն վրդ. Տէր Ստեփանոսեանը կարդացել է «Կնիգ քաղաքի» կամ «Կնիկեցի» բառերը, (Մասեաց Աղաւնի Դ. 60. յիշ. Ալիշան Սիսական 57), սակայն չգտայ: Ես էլ գեր. Սմբատեանի նման կարծում եմ, որ «Կնիկեցի», «Կնկեցի» կրճատուեալները փոխանակ կանգնեցի կարդալու՝ հ. Տէր Ստեփանոսեանը կնիքեցի է կարդացել:

(Նոյն խաչքարի կողքին)

Ես Մարկոսս, ... կանգնեցի խաչս յիշատակ մեր և ծնողաց մերոց. յով կարգայ՝ Ած ող...

Մի տափարակ գերեզմանաքարի վրայ.

Թվ. 92 (=1257). Այս է հանգիստ Յոհաննիսի դրան երեցոյ Զալալին. Ած ողորմի ասացէք:

Հարաւ-արեւմտեան կողմում, մատրան կից մի խաչքարի վրայ.

Թվ. 202 (=1507). կանգնեցաւ սբ խաչս Յովանէսի հիւսան. որք երկրպագանէք ասացէք Ած ողորմայ Յոհանէսիս:

Մի հին խաչքար էլ դրուած է իբր գիւղի այժմեան, շատ հասարակ և խարխուլ, եկեղեցու դրան կողմնակալ, որի վրայ կարդացուած է.

Ի Արհի եպիսկոպոսութեան Տեառն ... Սիւնեաց եպիսկոպոսի, ես Ովհաննէս քահանայ կանգնեցի զսբ խաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ:

Այժմեան Ատրեւմաման գիւղում չկան կանոնաւոր փողոցներ և ոչ էլ վայելուչ տնիւր. բացի երկուսից բոլորն էլ գլխատներ են, միայն նորագոյնները այլ ևս գետնի մէջ չեն շինուած, այլ ամբողջովին գետնի վրայ, թէպէտև նոյն ձևի, հերթիկով:

Բնակիչները Ալաշկերտի Թոփրադ-ղալայից և Խասթուրից են, ընդամենը՝ 233 տուն, 970 ար. 898 իգ. միասին 1868 հոգի: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և ձրկնորսութեամբ: Ունին 906 դ. 1250 ք. ս. վարելահող, 110 դ. 1150 ք. ս. արօտատեղի: Հողի սակաւութեան պատճառով զիւղացիների տնտեսական դրութիւնը շատ անտախտանձիկ է, շատ շատերը գնում են Թիֆլիս և Բագու մշակութիւն անելու:

Վերին-Ատրեւմամն. (62° 55' 50" — 40° 8' 35").—Տարածւում է մի դաշտավայրի վրայ, որից փոքր ինչ հեռու, ձորի միջով հոսում է Ատրեւմամն-չայը կամ Իշխանագետը: Բռնում է 13 դ. 1248 ք. ս. տարածութիւն: Դիւղում կայ մի հասարակ եկեղեցի, մի աննշան մատուռ, և մի քանի հին խաչքարեր: Վ. Ատրեւմամն գիւղի բնակիչները գաղթել են Ալաշկերտի Խասթուր գիւղից, ընդամենը 148 տուն են, 651 ար. 596 իգ. իմիասին՝ 1247 հոգի: Պարապմունքը նոյնն է. ունին 1306 դ. 8 ք. ս. վարելահող և 374 դ. 960 ք. ս. արօտատեղի:

Իշխանագիւղ.—Մի աւերակ գիւղատեղի է. Ներքին և Վերին Ատրեւմամնների միջև ձգուող ձորում, որի միջով հոսում է

Ատիեաման գետը, որ այստեղ Իշխանագետ է կոչւում: Ձորի լանջին, գետի աջ կողմը, գտնւում է մի գիւղատեղի, մի աւեր եկեղեցիով և խաչքարերով, երեւի սա Իշխանագիւղն է եղել, իսկ ձորի մէջ, գետի անմիջապէս աջ ափին մի վանք՝ Իշխանավանքը և մի գերեզման, որ այժմ էլ կոչւում է Իշխանի գերեզման և ուխտատեղի է: Այս բոլորին անուանաւոր Իշխանի յիշատակը դեռ մնացել է ժողովրդի յիշողութեան մէջ: Այժմ էլ գիւղացիները պատմում են, որ մի ժամանակ այստեղի գետը ձկն փոխարէն՝ օձեր է դուրս ձգել, և երբ բնակիչները սարսափած կամեցել են փախչել, սրանց Իշխանը աղօթքով դիմել է Աստծուն և խնդրել վերադարձնել օձերը գետը և դարձեալ ձուկ տալ իրենց: Աստուած կատարել է սրա խնդրուածքը, օձերը թափուել են գետը և համեղ ձկն փոխարկուել: Իշխանը տեսնելով այս հրաշքը, թողել է աշխարհային կեանքը, նոյն գետի ափին այժմեան աւերակ վանքը կառուցել և ճգնել: Երախտապարտ ժողովուրդը ի յիշատակ այդ հրաշքի՝ այդ ձուկը կոչել է իշխանաձուկ, և Իշխանի մասինց յետոյ ուխտատեղի դարձրել նրա դամբարանը:

Իշխանի վանքը շինուած է հասարակ, անտաշ քարից. ձեղունը ամբողջովին քանդուած է, պատերի էլ կէսն է մնացել: Միակ արեւմտեան դռան վերեւ պառկեցրած է մի հին, գեղեցիկ խաչքար:

Վանքից արեւմուտք, փոքր ինչ հեռու գտնւում է Իշխանի գերեզմանը՝ հասարակ, անտաշ քարերով շրջապատուած և հինգ հատ 2½ մետրանոց սալքարերով թաղ կապած: Ունի մի դուռն, այնքան ցածր և նեղ, որ մարդ միայն չոքած կարող է մտնել: Դամբարանի մէջ տեղում նկատելի է մի գերեզման, թէև սրա արեւելեան ծայրին կանգնեցրած են երեք խաչքար: Թէ այս և թէ դըրսում, դռան մօտ կանգնեցրած խաչքարի վրայ տապանադիր չկայ:

Իշխանի գերեզմանի և վանքի մօտ՝ ձորի քարաժայռերի մէջ կան մի քանի արհեստական քարայրեր և դէպի սրանց տանող գծուարեկանիլի արահետներ: Այս ու այն կողմում կան խաչքարեր, որոնցից միմիայն մինի, մի օրօրոցաձև փոքրիկ գերեզմանաքարի վրայ քանդակուած է մի մարդ՝ թախտի վրայ նստած, մօտը մուրճ, դաւ, հաց և արձանագրուած է:

Սբ խաչս բարեխաւս է Մկրտչին թվ. ՌԽԲ. (=1593)
Դիրամ կազմող.

Այս Իշխանաձորում կայ նաև մի աւեր ձիթահանք: Մի սառնորակ աղբիւր էլ բխում է գետի ձախ ափին: